ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19-ը փետրվարի 2018թ.
ժամը 14[30]

Ի գիտություն՝ *մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը 14.02.2018թ. տրամադրվել է հանձնաժողովի անդամներին.*

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:
Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոլյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 Քննարկելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«Մարիյա Մեդ Քո» և «Մեգիէլ» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել պատասխանատու ստորաբաժանմանը՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ հրավերի պահանջներին համապատասխանության (համարժեքության) մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, իսկ նիստը շարունակել՝ տրված եզրակացությունը ստանալուց հետո:

Շարունակելով աշխատանքները՝ 01.03.2018թ. կայացած նիստում հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված ***մասնագիտական եզրակացությունը***՝ որոշեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից ընթացակարգի 35-րդ չափաբաժնով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1) տեխնիկական բնութագրում նշվել է **«Ցիրկուլար կարող կտրող գործիք 29 մմ կամ համարժեք»**. անհարժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագիրը՝ բացառելով **«կամ համարժեք»** արտահայտությունը:

-**«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Հավելված N 6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չեն համապատասխանում ընթացակարգի հավերի 8.19 կետով սահմանված պահանջին. նշված հայտարարությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- **«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ**-ի կողմից չի ներկայացվել ընթացակարգի հրավերի N 6 հավելվածով նախատեսված (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը):
- ներկայացված N 6.1 հավելվածի (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) ձևաչափը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին, մասնավորապես՝ բացակայում են ընթացակարգի հրավերով պահանջվող՝ **ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ, ԱՐՏԱԴՐՈՂ ԵՐԿԻՐԸ** և **ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ:**
- մասնակցի կողմից ներկայացված Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չեն համապատասխանում ընթացակարգի հավերի 8.19 կետով սահմանված պահանջին. նշված հայտարարությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Բացի այդ, «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի ներքոհիշյալ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

36-րդ և 42-րդ չափաբաժիններ. Կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում նշված է, որ բաց սեղմակի բարձրությունը ոչ պակաս քան 5,0 մմ, սակայն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերով պահանջվում էր, ոչ պակաս քան 5,5մմ, վերջինս էական նշանակություն ունի, քանի որ բաց ոտիկի բարձրությունով է պայմանավորված այն հյուսվածքի հաստությունը, որը հնարավոր է վերցնել մեխանիկական կարի մեջ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաստ աղու ստորին հատվածները տարբեր մարդկանց մոտ ունենում են տարբեր հաստություններ, սեղմակի մաքսիմալ հաստությունը հնարավորություն է տալիս կարի մեջ ներգրավել հնարավորինս հաստ հյուսվածքներ, որը կանխում է հետագա բարդությունները, արյունահոսությունը, կղանքային պերիտոնիտ և այլն, որոնք անդառնալի հետևանքներ կթողնեն հիվանդի առողջության համար:

Կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում նշված է, որ թեք ցողունի երկարությունը 17.6 սմ է, սակայն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերով պահանջվում էր 18 սմ: Թեք ցողունի պահանջվող երկարությունը հնարավորություն է տալիս անվտանգ և առավելագույն խորը աշխատել բերանակցումներ / անաստամոզ/ տեղադրելիս՝ կանխելով հետագա հնարավոր բոլոր բարդությունները/արյունահոսություն պերիտոնիտ եվ այլն/:

42-րդ չափաբաժին – հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվում է տուփը պետք է պարունակի 3 ցիրկուլյար կարող գործիք, իսկ մասնակցի առաջարկում նշված է տուփ N1, որը ենթադրում է, որ տուփը պարունակում է 1 ցիրկուլյար կարող գործիք:

Ինչպես նաև կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա բոլոր մեծությունները հստակ նշված չեն:

41-րդ չափաբաժին – Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ ասեղնաբռնիչը պետք է կազմված լինի 400 սերիայի ձուլած պողպատից, իսկ կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով չի հստակեցվում պողպատի սերիան:

50-րդ և 51-րդ չափաբաժիններ – մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա է անհամապատասխանություն գործիքների երկարության մասով: Մասնավորապես պահանջվում է 55 եվ 75 մմ երկարություն, իսկ մասնակիցը ներկայացրել է 60 եվ 80 մմ երկարություն: Աշխատող մասի երկարությունը ունի կրիտիկական նշանակություն ճիշտ բերանակցումներ /անաստամոզ/ եվ ծայրատներ /կուլտյա/ ձեվավորելու համար: Բերանակցման ճիշտ երկարությունը և տարբեր բերանակցումների ժամանակ համապատասխան երկարության ընտրությունը հնարավորություն է տալիս ապահովել սննդի համաչափ անցումը աղեստամոքսային տրակտով, կանխելով հետվիրահատական բարդությունները /լուծ, փորկապություն, դեմպինգ սինդրոմ և այլն/: Բացակայում է նաև տուփի պարունակության մասին տեղեկատվությունը:

Հայտնում եմ նաև, որ կազմակերպության կողմից ներկայացված հավելված 6.1-ը չի համապատասխանում հրավերով պահանջվող ձևաչափին և առկա չէ էլեկտրոնային թվային ստորագրությունը:

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի ներքոհիշյալ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

Չափաբաժիններ 58-րդ, 59-րդ, 60-րդ և 61-րդ – կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը համարժեք չեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, մասնավորապես.

- համաձայն մասնակցի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերի տրոակարների օպտիկական թափանցիկ ծայրին բացակայում են **պլաստիկ բիլատերալ դանակները**, որոնք հնարավորություն են տալիս մինիմալ տրավմատիզացիայով արագ մուտք գործել որովայնի խոռոչ նվազեցնելով վիրահատության տևողությունը, վիրահատական և հետվիրահատական բարդությունները և հետվիրահատական շրջանը:
- համաձայն մասնակցի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերի բացակայում է **էնդոսկոպիկ վիդեոկամերան ֆիքսլու մեխանիզմը**, որի ճիշտ և երկարատև ֆիքսացիան հնարավորություն է տալիս մաքսիմալ ամբողջությամբ տեսնել վիրահատական դաշտը խնայել վիրահատական ժամանակը, նյութածախսը և մինիմումի հասցնել վիրահատական և հետվիրահատական բարդությունները
-. համաձայն մասնակցի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերի բացակայում է հղումն առ այ, որ տրոակարների **կանյուլան քանդվող է, որի շնորհիվ հեշտացվում է ռեզեկցված հյուսվածքների հեռացումը նրա միջով, վերջինս հնարավորություն է տալիս հեռացնել ռեզեկցված հյուսվածքները առանց տրոակարի, գործիքների և հեռացվող հյուսվածքների վնասման: Դրա շնորհիվ կրճատվում է վիրահատության տևողությունը և նվազում է նյութածախսը:**
- հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերով պահանջվում է, որ **կանյուլայի ներքին մակերեսը լինի կոնուսաձև ներփքված, ունենա հատուկ ծածկույթ՝ սիլիկոնային հիմքի վրա, որի շնորհիվ հեշտացվում է գործիքների մուտքն ու ելքը տրոակարի մեջ**, որը բացակայում է մասնակցի կողմից ներկայացված տեխնիական բնութագրում: Վերջինս հնարավորություն է տալիս խուսափել թանկաժեք գործիքների անհարկի վնասումից, նվազեցնելով ծախսերը:
- հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերով պահանջվում է, որ տրոակարները պետք է ունենան **ներկառուցված ունիվերսալ փոխարկիչ, որը հնարավորություն է տալիս տարբեր տրամագծի գործիքների կիրառում**, որը բացակայում է մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում: Վերջինս հնարավորություն է տալիս առանց լրացուցիչ սարքավորումների և պարագաների մեկ տրոակարի միջոցով օգտագործել մի քանի տրամաչափի գործիքներ, որն էլ իր հերթին խնայում է ժամանակ և անհիմն լրացուցիչ ծախսեր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցների կողմից ներկայացված շտկման քննարկման վերջնաժամկետի հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Ն. Հարությունյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան

01.03.2018թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12-ը մարտի 2018 թ.
ժամը 12[00]

***Ի գիտություն՝** մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկումները 05.02.2018թ. տրամադրվել է հանձնաժողովի անդամներին.*

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկում և ընտրված մասնակիցներին որոշման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկում և ընտրված մասնակիցներին որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված շտկումները հիմնականում վերաբերվում են առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերին և դրանց գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ է առավել երկար ժամանակ՝ հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 16.03.2018թ.-ին:

16.03.2018թ. ժամը 15:00-ին հանձնաժողովը նույն կազմով շարունակեց աշխատանքները.

1.1 Քննարկելով՝ **«Ինտերմեդ Գրուպ», «Մարիյա Մեդ Քո», «Մեգիէլ»** և **«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ների** կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը, հանձնաժողովը որոշեց դրանք գնահատել հրավերի պահանջներին համապատասխան: Միաժամանակ, քննարկելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի 14.03.2018թ. գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց վերջինիս հետ կնքվող պայմանագրում ապրանքների տեխնիկական բնութագրերը սահմանել ներկայացված շտկումներով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-**9/9**» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Ն. Հարությունյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան

16.03.2018թ.